Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի փետրվարի 4-ի 1-Լ որոշմամբ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 4

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 14

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 18

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 23

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 25

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 29

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ 35

8.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 36

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 37

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 44

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2019 թվականի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները: Տարեկան հաշվետվությունը չի արտացոլում նախորդ երկու տարիների համեմատականը՝ ըստ ոլորտների, քանի որ Տեսչական մարմինն իր փաստացի գործունեությունը սկսել է 2018 թվականի դեկտեմբերին և, չհանդիսանալով ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության, ՀՀ ՏԿՆ ՀՀ տրանսպորտային տեսչության, ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության և ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության իրավահաջորդը, չի տիրապետում իր վերահսկողության ոլորտներում նախորդ տարիների իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությանը:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում կատարվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Վերահսկողության և ստուգումների իրականացում առողջապահական հիմնարկներում, գիտական և ուսումնական հաստատություններում, մշակույթի ոլորտի օբյեկտներում
- ✓ ՀՀ մարզերի տարածքում և Երևանում գործող ավտոկայարաններից, ավտոկայաններից, ե/կետերից իրականացվող միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր երթուղիների սպասարկման կազմակերպման գործընթացների նկատմաբ ուսումնասիրությունների, դիտարկումների և վերահսկողական գործառույթների իրականացում
- ✓ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում՝ «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայաններից և այլ չնախատեսված կայանատեղերից իրականացվող միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ողևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ ոաումնասիրությունների, դիտարկումների և վերահսկողական գործառույթների իրականացում
- ✓ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի ոլորտին առնչվող հոդվածների փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկի ներկայացում
- ✓ ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկի ներկայացում
- ✓ Իրազեկման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացում
- ✓ Իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման վերաբերյալ նախագծերի կազմում և ներկայացում
- ✓ «Թեժ գծի» ծառայության գործարկում

Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետների խախտումներով կատարվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Ռիսկի մեթոդաբանության նախագծի մշակում և ներկայացում հաստատման
- ✓ Ոլորտային ստուգաթերթերի մշակում և ներկայացում հաստատման
- ✓ Պաշտոնական կայքէջի լիարժեք գործարկում

2019 թվականին սկսվել, սակայն չեն ավարտվել հետևյալ միջոցառումները.

- ✓ Կադրային համալրում.
- ✓ Տարածքային խնդիրների լուծում, տեխնիկական և գույքային հագեցվածություն
- ✓ Ստուգումների ուղեցույցի կազմում
- ✓ Տեղեկատվական բազաների ստեղծում
- ✓ Միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսվարող սուբյեկտում ստուգումների հաճախականության խնդիրը լուծելու նպատակով «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացում

Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսվել, սակայն չեն իրականացվել հետևյալ միջոցառումները

- ✓ Ստուգումների տարեկան ծրագրի կազմում և ներկայացում հաստատման
- ✓ Տեսչական մարմնին հասցեագրված դիմում բողոքների ըմդունման և հետագա ընթացքի կարգի մշակում
- ✓ Ինտերակտիվ ֆորմատով կայքում հրապարակում
- ✓ Յուրաքանչյուր բնագավառին առընչվող իրավական ակտերի հոդվածների, ժողովածուների հրապարակում
- ✓ Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգի հաստատում
- ✓ Վարչական վարույթների գործընթացի և արդյունքների ամփոփման կարգի հաստատում
- ✓ Տեսչական մարմնի մասնագետների վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում
- ✓ ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկելն առանց այդ ճանապարհների տնօրինողի թույլտվության նկատմամբ վերահսկողության իրականացում
- ✓ Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության անվտանգության ոլորտում ուսումնասիրումների, դիտարկումների և տեխնիկական վերահսկողության իրականացում:

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2019 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել են միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, միջպետական ավտոբուսային փոխադրումների ուղետոմսերի վաճառքի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 1261 մշտադիտարկում:



Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 961 մշտադիտարկում, ինչի արդյունքում ՀՀ ՏԿՏՏ նախարարության քննարկման է ներկայացվել միջմարզային երթուղիների մեծ մասի գործող չվացուցակների վերանայման և փոփոխման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկություն:

Հիմք ընդունելով ՀՀ տարածքում գործող 40 տեխնիկական զննման կայաններում 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեխնիկական զննություն անցած տրասպորտային միջոցների թվականաքի վերլուծության արդյունքները՝ Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից 2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել է 66 ուսումնասիրություն և դիտարկում, որից 19-ը՝ Երևանում, 16-ը՝ Արարատի մարզում և այլն՝ ըստ պատկերի:



2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 369 գովազդային վահանակներ, որոնցից 170-ի վերաբերյալ գովազդակիրները գրավոր կամ առձեռն նախազգուշացվել են: Այս գործառույթը շարունակական է:

Հ/Հ	Մարզեր	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը,	Ծանուցված նախազգուշացումների քանակը
1	Արագածոտն	59	25
2	Արարատ	35	10
3	Արմավիր	44	27
4	Գեղարքունիք	35	8
5	Լոռի	39	34
6	Կոտայք	13	10
7	Շիրակ	17	15
8	Սյունիք	40	26
9	Վայոց Ձոր	51	5
10	Տավուշ	36	10
Ընդամենը		**369**	**170**

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում իրականացվել են թվով 1259 տեխնիկական ստուգումներ, որից 522-ը՝ (41.5%) էլեկտրաէներգետիկական համակարգում և 737-ը՝ (58.5%) գազամատակարարման համակարգում:



Արդյունքում տրվել է 1102 (87.5%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 157 (12.5%) տեղակայանքների գործարկումները՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են:



Էներգատեղակայանքներում տեղի են ունեցել թվով 20 մահվան ելքով պատահարներ, որոնցից 17 պատահարների վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմակերպվել և իրականացվել են մասնագիտական քննություններ, ընդ որում Երևանում՝ 4, Լոռու մարզում՝ 3, Կոտայքի մարզում՝ 5, Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ 2-ական, Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի և Տավուշի մարզերում՝ մեկական: Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են 1 համակարգային պատահարի մասնագիտական քննության: Հիմք ընդունելով տեղի ունեցած պատահարների վիճակագրությունը՝ 2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրում առաջնահերթությունը տրվել է էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին (մասնաճյուղերին) և իրենց պատկանող էներգատեղակայանքներին:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է ՀՀ-ում 2019 թվականի ընթացքում արձանագրված 9984 հրդեհի դեպք, 1367 հրդեհների վերաբերյալ կազմվել են ակտեր: Վիճակագրությունը վկայում է, որ հրդեհների գերակշռող մասը տեղի է ունեցել բուսածածկ տարածքներում (79%), ուստի բնակչության համար բուսածածկ տարածքների հրդեհների ռիսկերի և դրանց վտանգավոր հետևանքների մասին իրազեկվածության ապահովման, հրդեհավտանգ ժամանակաշրջաններում բուսածածկ տարածքների հրդեհների ռիսկերի նվազեցման նպատակով, անտառամերձ, բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից և ռիսկային համայնքների ղեկավարների, վարչակազմի ու բնակչության հետ անցկացվել են պարբերական հանդիպումներ, զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (հեռուստատեսություն, մամուլ, համացանց, և այլն) իրականացվել են հակահրդեհային քարոզչական աշխատանքներ:

Ամռան ամիսներին մանկական հանգստյան ճամբարներում հանգստացող երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով՝ ՀՀ տարածքում գործող բոլոր մանկական հանգստյան ճամբարներում իրականացվել են նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ: Հայտնաբերված խախտումների մասին ճամբարների ղեկավարները բանավոր տեղեկացվել են: Կրկնակի այցելության ընթացքում պարզվել է, որ խախտումների մեծ մասը վերացված են: Ջոկատավարների և տեխնիկական սպասարկող անձնակազմի հետ անցկացվել են հակահրդեհային քարոզչական աշխատանքներ:

Տեխնիկական անվտանգության պահանջներին համապատասխանության հարցը բացահայտելու, տեխնիկական վթարներից խուսափելու և ժամանակին կանխարգելելու նպատակով իրականացվել են հետազոտություններ՝ ՀՀ տարածքում շահագործվող, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված բոլոր կարուսելներում: Հետազոտության արդյունքում հայտնաբերված խախտումները վերացնելու համար տնօրեններին առաջարկվել է հնարավորինս կարճ ժամանակահատվածում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1774 հրդեհատեխնիկական հետազոտություն տարբեր բնույթի օբյեկտներում: Բացահայտված հիմնական խախտումները վերաբերում են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերին, էլեկտրական հաղորդալարերի մոնտաժման կանոններին, տարահանման ելքերի քանակին ու դռների բացման ուղղությանը:

Հրդեհատեխնիկական հետազոտությունների են ենթարկվել նաև 1204 հանրակրթական դպրոց ՀՀ ողջ տարածքում, ինչը կազմում է ՀՏՀ-ների ընդհանուր քանակի 68%-ը: Ըստ մարզերի կատարված աշխատանքը ունի հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ:



ՀՏՀ արդյունքում պարզվել է, որ դպրոցների 91,8% կահավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով, իսկ 71%-ը ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով: Բացահայտված թերությունների բացարձակ և տոկոսային արժեքները ներկայացված են աղյուսակով.

Խախտման բնույթը	Խախտում թույլ տված դպրոցների քանակը	
կահավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով	1106	91.86%
ապահովված չեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներով	856	71.09%
կահավորված չեն ներքին հակահրդեհային ջրացանցով	828	68.77%
հիմնատարրերը մշակված չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով	817	67.85%
էլեկտրական հաղորդալարերը մոնտաժված չեն համաձայն էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների	579	48.09%
բացակայում են արտաքին հրշեջ սանդուղքները	451	37.45%
տարահանման ելի դռները դեպի դուրս բացվող չեն	216	17.94%
առկա չեն տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացությունը	87	7.22%

Հայտնաբերված խախտումների մասին դպրոցների տնօրենները բանավոր տեղեկացվել են: Տեղեկացվել են նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը և Երևանի քաղաքապետը:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 414 եզրակացություն նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 287 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 180-ը (63%)՝ Երևանում:

Տրամադրվել է 13 հրդեհ ազդարարող համակարգերի շահագործման եզրակացություն:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

2019 թվականի ընթացքում կատարվել են 2749 դիտարկումներ և տեղազննումներ, որոնցից 594-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված <u>սուբվենցիոն ծրագրի</u> շրջանակներում: Ըստ մարզերի վերջինս ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝





Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են <u>ավարտված շինարարական</u> 1750 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում Երևանում՝ 763 (43.6%), Կոտայքում՝ 183 (11%), Գեղարքունիքում՝ 142 (8%), Լոռիում՝ 140 (8%), Շիրակում՝ 102՝ (6%) և այլն՝ ըստ պատկերի:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1266 դրական և 396 բացասական եզրակացություն: Ըստ մարզերի այն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են թվով 411 ինքնակամ կառույցներ ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Կոտայքի մարզում՝ 87 (21%), Արագածոտնի մարզում՝ 77 (19%), Տավուշի մարզում՝ 46 (11%) և Շիրակի մարզում՝ 44 (11%):



Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են միջնորդություն ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ, 5-ն էլ՝ Գեղարքունիքի մարզում: Իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն է ներկայացվել 2 հաղորդում ՝ քաղաքաշինության նորմերի խախտումների վերաբերյալ՝ ինչպես կառուցապատողների կողմից, այնպես էլ համայքի ղեկավարների անգործության վերաբերյալ: Հաղորդումները ներկայացվել են Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում իրականացված վերահսկողության արդյուքներով: Քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից իրականացվել է եզրաքարերի, դիտահորերի, նստվածքահավաքների (отстойник) նիշերի 3 ուսումնասիրություն ՀՀ Շիրակի մարզի տարածքում:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ վարչապետի հետ համաձայնեցված գրաֆիկով իրականացվել է 135 ստուգում, որից 45-ը (33,3%) Երևանում, 16-ական Արմավիրի (11,8%) և Լոռու (11,8%) մարզերում, 11-ը (8%) Կոտայքի մարզում:



Բացահայտվել է 1194 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ պատկերը.



Ստուգման արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ 65 օբյեկտ (ստուգման ենթարկված օբյեկտների 48%) ապահովված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով, 58 օբյեկտներում (43%) հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին, 37-ում (27,4%)՝ հակահրդեհային ինքնաշխատ

համակարգերը գտնվում են անսարք վիճակում: Հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով՝ յուրաքանչյուր ստուգման ընթացքում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվություն:

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 4,7 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 0,3-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները (100%) եղել են տարեկան ծրագրով չնախատեսված

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

«Հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի և ՀՀ Վարչապետի հետ համաձայնեցված գրաֆիկով՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության կողմից 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ստուգումներ են իրականացվել ՀՀ Սյունիքի մարզի 2, Կոտայքի մարզի 6, Լոռու մարզի 3, Արագածոտնի մարզի 4 և Արարատի մարզի 6 համայնքներում:

Ընդհանուր առմամբ 5 մարզերի 21 համայնքներում կատարված ստուգումների արդյունքում հայտանբերվել և արձանագրվել է 339 խախտման դեպք, որից 34-ը (10%)՝ Սյունիքի, 97-ը (28.6%)՝ Կոտայքի, 39-ը (11.5%)՝ Լոռու, 80-ը (23.6%) Արագածոտնի և 89-ը (26.3%) Արարատի մարզերում: Հիմնական դեպքերը կապված են հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների խախտումների հետ (ընդհանուր քանակի 72%):



Հայտնաբերվել են՝

✓ հողամասի նպատակային նշանակության խախտման ընդհանուր թվով 166 դեպք, որից 14-ը Սյունիքի, 53-ը Կոտայքի, 18-ը Լոռու, 19-ը Արագածոտնի և 62-ը Արարատի մարզերում.

✓ հողամասի գործառնական նշանակության խախտման ընդհանուր թվով 79 դեպք, որից 7-ը Սյունիքի, 22-ը Կոտայքի, 5-ը Լոռու, 37-ը Արագածոտնի և 8-ը Արարատի մարզերում.

✓ օտարման կարգի խախտման ընդհանուր թվով 36 դեպք, որից 6-ը Սյունիքի, 11-ը Կոտայքի, 19-ը Արարատի մարզերում.

✓ առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքների օտարման ընդհանուր թվով 44 դեպք, որից 7-ը՝ Սյունիքի, 7-ը՝ Կոտայքի, 15-ը՝ Լոռու, 15-ը՝ Արագածոտնի մարզերում.

✓ տրամադրման կարգի խախտման ընդհանուր թվով 12 դեպք, որից 4-ը Կոտայքի, 1-ը Լոռու, 7-ը Արագածոտնի մարզերում.

✓ գեոդեզիական կետի խախտման ընդհանուր թվով 2 դեպք, 2-ն էլ՝ Արագածոտնի մարզում:



Ստուգումների արդյունքում կազմվել է 21 ակտ: Բացահայտված խախտումները վերացնելու և պատասխանատու պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով միջնորդություններ են ներկայացվել ՀՀ համապատասխան մարզպետներին: Ընդհանուր առմամբ նշանակվել է 7.450.000 դրամի չափով տուգանք, որից 650.000 դրամը՝ Սյունիքի, 2.250.000 դրամը՝ Կոտայքի, 1.150.000 դրամը Լոռու, 1.750.000 դրամը՝ Արագածոտնի և 1.650.000 դրամը՝ Արարատի մարզերում:

Արագածոտնի մարզի 1 և Արարատի մարզի 3 համայնքներում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ կազմված ակտերի մեկական

օրինակ ուղարկվել է համապատասխան իրավասու մարմին: Հաղորդումների հիման վրա հարուցված են քրեական գործեր:

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2 օր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացվել է միջինում 0,12 մարդկային ռեսուրս և 50.900 դրամի ծախս:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2019 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված թվով 130 դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի, Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են երթուղիների թերի շահագործման կամ չշահագործմանը, տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը, չվացուցակների խախտումներին, կանոնավոր և ոչ կանոնավոր ապօրինի ուղևորափոխադրումներին և այլ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ու տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացված հիմնավոր 98 գրություններից և դիմում-բողոքներից լուծում են ստացել՝ 96-ը (98%):

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ու տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացված հիմնավոր 27 գրություններից, դիմում-բողոքներից, լուծում են ստացել՝ 26-ը (96.3%):

Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտին առնչվող դիմում-բողոքներում քաղաքացիների բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են՝

- ✓ էներգատեղակայանքների անվտանգության գոտիների խախտմամբ պայմանավորված դժգոհություններին,
- ✓ մատակարարվող էլեկտրաէներգիայի որակական ցուցանիշներին (անջատումներ, լարման տատանումներ և այլն),
- ✓ էներգատեղակայանքների շահագործման կանոնների նկատված խախտումներին (տեղակայված գազատար խողովակների նախագծային խախտումներ, էլեկտրահաղորդման մալուխային և օդային գծերի մաշվածությամբ պայմանավորված խնդիրներին),
- ✓ քաղաքացիների սեփականություն հանդիսացող տարածքներում վերջիններիս սեփական իրավունքի խախտումներով տեղակայված էներգատեղակայանքներին:

Տեսչական մարմնի կողմից ձեռնարկած միջոցառումների արդյունքում լուծվել են էներգետիկայի բնագավառում քաղաքացիներին անհանգստացնող և տարիներ շարունակ չլուծվող խնդիրներ, այն է ՝

- ամրապնդվել են օդային գծերի մետաղական հենասյունները (1 շնորհակալագիր),
- տեղափոխվել են բնակիչների տների, մանկապարտեզների վրայով անվտանգության գոտիների խախտմամբ անցնող բարձր լարման օդային գծերի ուղեգծերը (2 շնորհակալագիր),
- վերացվել են էլեկտրամատակարարման լարման տատանումները (1 շնորհակալագիր),
- տեղափոխվել են անվտանգության կանոնների խախտմամբ տեղակայված էլ. հաշվիչներ (1 շնորհակալագիր):

ՀՀ էներգետիկական համակարգում 2019 թվականի ընթացքում տեղի ունեցած մահացու ելքով պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված 24 դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց մի մասը (մոտավորապես՝ 20 %) տեղի են ունեցել էներգատեղակայանքներում, որոնք փաստացի տիրազուրկ են, չեն գտնվում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ԳազպրոմԱրմենիա» ՓԲ ընկերությունների հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, փոխարինման աշխատանքներ, ընկերությունները պատասխանատվություն չեն կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերությունների կողմից սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա և բնական գազ մատակարարելու համար: Տեսչական մարմինը 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսում է ներկայացնել առաջարկություն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում, «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի ««Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1933-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, որի շնորհիվ կլուծվի տիրազուրկ էներգատեղակայանքների հետ կապված խնդիրը:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Ստացված 96 դիմում-բողոքների և գրությունների հիման վրա իրականացվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Դիմում-բողոքները հիմնականում վերաբերում էին՝

- գոյություն ունեցող և նոր կառուցվող շինությունների միջև հակահրդեհային միջտարածության խախտումներին,
- գործող օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների խախտումներին:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 613 դիմում-բողոք և գրություն, որից

263-ը (43%) ստացվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից (այդ թվում ՀՀ վարչապետի աշխատակազմից, ՀՀ Ազգային Ժողովից, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից, նախարարություններից և այլն), իսկ 350-ը (57%)՝ տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից: Գրություններում և դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Հիմնավոր 607 դիմումներից արդեն իսկ պատասխանվել է 566-ին (93.2%):



2019 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների, ինչպես նաև կատարված մշտադիտարկումների արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող քաղաքաշինական ոլորտում հանդիպող խնդիրները հիմնականում վերաբերվում են հետևյալին.

- ՀՀ կառավարության N 596 որոշմամբ հաստատված կարգերի շեղումներով համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրում.
- Համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցում .
- Կառուցապատողների կողմից նախագծային շեղումներով իրականացվող շինարարական աշխատանքներ.
- Աշխատանքների որակի տեխնիկական և նախագծային հսկողության ոչ պատշաճ իրականացում:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմին է ներկայացվել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, մարզպետարաններից և քաղաքացիներից՝ «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ 20 դիմում և գրություն, որոնց հիման վրա իրականացվել են ստուգումներ Արագածոտնի մարզի 8, Կոտայքի մարզի 4, Տավուշի՝ 4, Արարատի՝ 3 և Արմավիրի՝ 1 համայնքներում:

	Տավուշ	Կոտայք	Արագածոտն	Արարատ	Արմավիր	ընդամենը
Ստուգված համայնքների քանակը	4	4	8	3	1	20
Բացահայտված խախտումների քանակը	11	6	28	86	1	132
Խախտումների վերաբերյալ կազմված ակտերի քանակ	3	3	7	3	1	17
Վարչական տուգանքի չափը	800.000	150.000	1.150.000	150.000	850.000	3.100.000



20 համայնքներում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել և արձանագրվել է 132 խախտում, որիվ 86-ը (65.15%)՝ Արարատի, իսկ 28-ը (21,21%)՝ Արագածոտնի մարզերում:

Հայտնաբերվել են՝

- ✓ հողամասի գործառնական նշանակության խախտման ընդհանուր թվով 73 դեպք (բացահայտված խախտումների 55.2%), որից 71-ը Արարատի և 2-ը Արագածոտնի մարզերում.
- ✓ հողամասի նպատակային նշանակության խախտման ընդհանուր թվով 46 դեպք (բացահայտված խախտումների 35%), որից 20-ը Արագածոտնի, 11-ը Արարատի, 8-ը Տավուշի, 6-ը Կոտայքի և 1-ը Արմավիրի մարզերում.



- ✓ հողերի օտարման և տրամադրման կարգի խախտման ընդհանուր թվով 11 դեպք (բացահայտված խախտումների 8.3%), որից 4-ական՝ Արագածոտնի և Արարատի, իսկ 3-ը Տավուշի մարզերում.
- ✓ գեոդեզիական կետի խախտման ընդհանուր թվով 2 դեպք (բացահայտված խախտումների 1.5%), 2-ն էլ՝ Արագածոտնի մարզում:

Ստուգումների արդյունքում կազմվել է 17 ակտ: Բացահայտված խախտումները վերացնելու և պատասխանատու պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով միջնորդություններ են ներկայացվել ՀՀ համապատասխան մարզպետներին: Ընդհանուր առմամբ նշանակվել է 3.100.000 դրամի չափով տուգանք, որից 1.150.000 դրամը՝ Արագածոտնի, 850.000 դրամը՝ Արմավիրի, 800.000 դրամը՝ Տավուշի և 150 .000-ական՝ Կոտայքի և Արարատի մարզերում:

Կոտայքի և Արագածոտնի մարզերի 3-ական համայնքներում, Արարատի 2 և Տավուշի մարզի 1 համայնքներում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ կազմված ակտերի մեկական օրինակ ուղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ: Հաղորդումների հիման վրա հարուցված են քրեական գործեր: Մերժվել է մեկ քրեական գործի հարուցման մասին հաղորդումը, որը բողոքարկվել է Տեսչական մարմնի կողմից: Բողոքարկման արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի անմիջական հսկողությամբ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին Կոտայքի մարզի դատախազին և որոշումը վերացվել է: Քրեական գործը հարուցվել և գտնվում է նախաքննության փուլում:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վարչական վարույթները հիմնականում հարուցվել են տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների շրջանակներում տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի, ղեկավարի տեղակալի կողմից տրված հանձնարարականների (տրանսպորտային անվտանգության ոլորտում), պետական մարմինների և քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

Իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 298 արձանագրություն, այդ թվում 280-ը (94%)՝ կանոնավոր, 17-ը (6%)՝ տաքսոմոտորային փոխադրումների վերաբերյալ, 1-ը առանց «Հայավտոկայարան» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի միջպետական ուղետոմսերի ապօրինի վաճառքի իրականացման համար: Տվյալ բնագավառում իրականացված աշխատանքի բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը՝

Երևան	Արմավիր	Կոտայք	Գեղար-քունիք	Շիրակ	Արագա-ծոտն	Արարատ	Լոռի	Տավուշ	Սյունիք	Վայոց Ձոր
116	**42**	**35**	**28**	**18**	**18**	**15**	**11**	**7**	**7**	**3**

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Իրականացվել է 298 վարչական վարույթ, կայացվել է 40 կարճման որոշում և 164 որոշում՝ վարչական տուգանք նշանակելու վերաբերյալ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն:

Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 9 հայցադիմում:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում էներգետիկայի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 22 արձանագրություն: Կայացվել է 16 որոշում՝ վարչական տույժ կիրառելու մասին: 6 գործ ընթացքի մեջ է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 134 արձանագրություն: Տեխնիկական անվտանգության ոլորտում իրականացվել է 36 վարչական վարույթ, կայացվել է 21 որոշում՝ 6-ը կարճման, 15-ը վարչական տույժ նշանակելու մասին: 15 գործ ընթացքի մեջ է:

Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 8 հայցադիմում տեխնիկական անվտանգության ոլորտին առնչվող հարցերով, որից 6 դեպքերում բողոքարկվել են տեխնիկական անվտանգության բնագավառներում կայացված որոշումները: Դատական քննությունները նշանակված են 2020 թվականին:

Քաղաքաշինության բնագավառում

Կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 131 արձանագրություն: Նշանակվել է 19.820 միլիոն դրամի վարչական տուգանք, որից գանձվել է 18.150 միլիոն դրամ: Անբողոքարկելի վարչական ակտերը ներկայացվել են դրամական պահանջների կատարման վերաբերյալ գրությունների հիման վրա հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի կողմից կազմակերպվել է ճանաչողական 279 հանդիպում և աշխատանքային խորհրդակցություն միջմարզային, ներմարզային և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տնօրենների հետ: Խորհրդատվություն է տրամադրվել թվով 212 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 82 դեպքում (38,7%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից և նախաձեռնությամբ բարձրացվող հիմնական խնդիրները վերաբերում են միջմարզային և միջքաղաքային երթուղիներով տաքսամոտորային ապօրինի կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը: Միջպետական փոխադրող տնտեսվարողների նախաձեռնությամբ կայացած խորհրդատվական հանդիպումները վերաբերվել են 6-8 նստատեղ ունեցող թեթև-մարդատար տրանասպորտային միջոցներով, միկրոավտոբուսներով և ավտոբուսներով միջպետական ապօրինի կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը: Տնտեսվարողների կողմից բարձրացված խնդիրների լուծման համար անհրաժեշտ են տրանսպորտի ոլորտը կարգավորող և վերահսկողական գործառույթներին վերաբերող օրենսդրական փոփոխություններ և լրացումներ:

Ուղարկվել են նաև իրազեկող բնույթի գրություններ (149 հատ) և ծանուցումներ (354 հատ), Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 21 հոդված, թերթերին տրամադրվել է 13 նյութ: Իրականացվել են խորհրդատվական և իրազեկող բնույթի 9 ելույթ տարբեր հեռուստաալիքներով: Տեսչական մարմնի տարածքային բաժինների աշխատակիցները մասնակցել են մարզերում և համայնքներում կազմակերպված 26 քննարկումներին:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 13 հաղորդագրություն: Տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել են 10 մամուլի հաղորդագրություններ, թերթերին տրամադրվել է 10 նյութ:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի տարածքում 250 ՄՎտ հզորության գազային վառելիքով, կոմբինացված ցիկլով էլեկտրակայան կառուցող «Ռենկո», ինչպես նաև «Մասրիկ» ՓԲԸ-ի տարածքում 55 ՄՎտ հզորության ֆոտովոլտային կայան կառուցող «Ֆ.ԷՍ.ԷԼ.Սոլար» ընկերությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ ՔՏՀԱՏՄ-ում կազմակերպվել է խորհրդակցություն: Ընկերությունների ներկայացուցիչներին հանգամանորեն ներկայացվել են ՀՀ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործող օրենսդրական և

իրավական ակտերը, ինչպես նաև իրենց կողմից կառուցվող էներգատեղակայանքների գործարկման ընթացակարգը:

Խորհրդատվություն է տրամադրվել թվով 129 տնտեսավարողներին և քաղաքացիներին: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված այլ հարցեր ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրվել է թվով 1175 խորհրդատվություն, որից 991 դեպքում (84,34%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (հեռուստատեսությամբ՝ 8 ելույթ, մամուլում՝ 37 հոդված, ՏՄ պաշտոնական կայքում՝ 30 հոդված): Հրդեհային անվտանգության պահանջների պահպանման, հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով՝ բնակելի շենքերի, հյուրանոցների և հանրակացարանների համար, առողջարարական, հանգստյան տների և զբոսաշրջության հաստատությունների, առևտրի և հասարակական սննդի օբյեկտների համար հրդեհային և տեխնիկական անվտանագության ստուգաթերթերի հիման վրա պատրաստվել են իրազեկող բնույթի 5 գրքույկ (բուկլետ):

Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին (գործող շինարարական նորմեր և կանոններ), հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7), կրակմարիչների քանակին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Քաղաքաշինության բնագավառում

Խորհրդատվություն է տրամադրվել թվով 245 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 177 դեպքում (72,2%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- ✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- ✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)
- ✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությյունների փոփոխության հարցերին.(ՀՀ կառավարության 02.02.2002թ.N88 որոշումամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր):

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (հեռուստատեսությամբ՝ 5 ելույթ, մամուլում՝ 39 հոդված, ՏՄ պաշտոնական կայքում՝ 27 հոդված):

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

Ստուգումների ընթացքում ցուցաբերվել է 50 խորհրդատվական օգնություն, որից 41 (82%) դեպքում՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: ՔՏՀԱՏՄ աշխատակիցների կողմից՝ 2019 թվականի ընթացքում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Այդ թվում.

- ✓ հողային հաշվեկշիռը (բալանսը) ճիշտ կազմելու վերաբերյալ (ՀՀ կառավարության 23.10.2000թ. «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը

հաստատելու մասին» թիվ 656 որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 31.05.2005թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների, մարզերի և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռները կազմելու մասին հրահանգները հաստատելու մասին» թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգ),

- ✓ աճուռդային փաթեթների պարունակության վերաբերյալ (ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) և գ) ենթակետեր),
- ✓ հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար՝ միջգերատեսչական հանձնաժողով ուղարկվող փաթեթների պարունակության, նպատակային և գործառնական հողատեսքերի կարգավիճակը փոխելու վերաբերյալ՝ (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշում):

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիաալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 15 հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել են 36 հաղորդագրություն:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1025-Ն որոշմամբ հաստատվել է Տեսչական մարմնի կողմից մշակված «**Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու եվ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական եվ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին**» որոշման նախագիծը:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1697 որոշմամբ հաստատվել է Տեսչական մարմնի կողմից մշակված «**Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին**» որոշման նախագիծը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) առաջարկվել է լուծարված տեսչությունների անվանումները փոխարինել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի անվանումով, որպեսզի Տեսչական մարմինը ՎԻՎ օրենսգրքի հիման վրա վարչական վարույթ իրականացնելու իրավասություն ունենա:

Առաջարկվել է **«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի** 8-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետը «հանձնարարագրեր,» բառից հետո լրացնել «*հանձնարարականներ*,» բառով, տեսչական մարմնի ղեկավարին հանձնարարականներ տալու իրավունք վերապահելու համար:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

ՀՀ տարածքում գործող տեխնիկական աննման կայաններում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների վերլուծության հիման վրա ՀՀ ՏԿՏՏ նախարարությանն առաջարկվել է կատարել համապատասխան փոփոխություններ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ հնարավորություն տալով իրավախախտներին վարչական պատասխանատվության ենթարկելու: Միաժամանակ առաջարկվել է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի 269-րդ կետով հաստատված միջոցառման կատարումն ապահովելու համար՝ տեխնիկական զննման ներդրվող էլեկտրոնային համակարգի շտեմարանին առցանց ռեժիմով միացման

հնարավորություն նախատեսել նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի համար:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

««Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առաջարկվել է 6-րդ հոդվածի 1-ին մասին ա) կետի երկրորդ ենթակետը «վերլուծության» բառից հետո լրացնել *«, ՀՀ քաղաքացիներից, իրավաբանական անձանցից ստացված դիմումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրավոր տեղեկատվությունների ուսումնասիրությունների արդյունքում կատարված վերլուծությունների»* բառերով:

Առաջարկվել է **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի.

- 2)-րդ մասում «, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտները» բառերը փոխարինել *«, իսկ քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման բնագավառներում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտները»* բառերով:
- 3)-րդ մասում՝ «քաղաքաշինության բնագավառում» բառերը փոխարինել «*քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման բնագավառներում*» բառերով, 1)-ին և 4)-րդ պարբերություններում «քաղաքաշինության օբյեկտի» բառերը փոխարինել «*քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտների*», 2)-րդ և 3)-րդ պարբերություններում «քաղաքաշինության օբյեկտում» բառերը փոխարինել «*քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտներում*», իսկ «քաղաքաշինական գործունեություն» բառերը փոխարինել «*քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման գործունեություն*» բառերով:
- 4)-րդ մասում «,իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտների» բառերը փոխարինել «,*իսկ քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման բնագավառներում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտների*» բառերով:
- 5)-րդ մասում «, քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ նաև յուրաքանչյուր քաղաքաշինական օբյեկտների անվանումը,» բառերը փոխարինել «, *քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման բնագավառներում իրականացվող ստուգումների դեպքում՝ նաև յուրաքանչյուր քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտների անվանումը,*» բառերով, իսկ

«,քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ յուրաքանչյուր քաղաքաշինական օբյեկտներում» բառերը փոխարինել «, *քաղաքաշինության, էներգետիկայի և էներգասպառման բնագավառներում իրականացվող ստուգումների դեպքում՝ յուրաքանչյուր քաղաքաշինական, էներգետիկայի և էներգասպառման օբյեկտներում*» բառերով:

Վերոգրյալ առաջարկի նպատակը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը թույլ է տալիս մեկ տնտեսավարող սուբյեկտի մոտ տարված մեջ մեկ անգամ ստուգում իրականացնել, այնինչ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտները 5-ն են, և մեկ ոլորտով ստուգման գնալու դեպքում հնարավոր չի լինելու մյուս ոլորտով նույն տնտեսավարողի մոտ ստուգում իրականացնել:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կազմվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել առաջարկներ «Հրդեհային անվտանգության մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու մասին**:** Մասնավորապես, առաջարկվել է.

- **««Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածում «տեսչական մարմինը այդ բնագավառում» բառերը փոխարինել «*տեսչական մարմինը՝ պաշտոնական վիճակագրության իրականացման բնագավառում*» բառերով:
- **««Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախագծի 4-րդ հոդվածի 1)-ին կետից հանել «*համապատասխան առանձնացված ստորաբաժանման միջոցով*» բառերը (քանի որ Տեսչական մարմինը չունի առանձնացված ստորաբաժանումներ): Օրենքի 3-րդ հոդվածում «էներգատեղակայանքների» բառից առաջ ավելացնել «*էլեկտրական*» բառը, իսկ 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերից հանել «լիազոր մարմնի կողմից» բառերը, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերից հանել «*լիազոր*» բառը:

Հրդեհային անվտանգության մասնագետները մասնակցել են թվով 10 նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, այդ թվում «Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 042/2017) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջարկով «Բազմաբնակարան շենքի պահպանման, հուսալիության բարելավման, էներգաարդյունավետության բարձրացման և շահագործման կանոնների» նախագծի,

Ռուսաստանի Դաշնության բնապահպանական, տեխնոլոգիական և ատոմային վերահսկողության Դաշնային ծառայության (Ростехнадзор) կողմից մշակված՝ մայրուղային խողովակաշարային տրանսպորտի արտադրական վտանգավոր օբյեկտներում վերահսկողության վերաբերյալ հարցաթերթիկի, քննարկման և մշակման աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել է կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ **««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշման** մեջ՝ նպատակ ունենալով նորմավորվելու և հստակեցնելու լցակայանների հեռավորությունները այլ շինություններից, գործող և նոր կառուցվող համատեղված լցակայանների տարածքում իրեն պատկանող շինությունների և սարքավորումների միջև հակահրդեհային միջտարածությունները:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել է **««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում** լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1)-ին կետը «Սուբյեկտների՝» բառից հետո լրացնել «համայնքների ղեկավարների (Երևանի քաղաքապետի),» բառերով: Միաժամանակ առաջարկվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը «տնտեսավարող սուբյեկտում» բառերից հետո լրացնել «միևնույն բնագավառում» բառերով (նշված լրացումը չկատարելու դեպքում Տեսչական մարմինը օրինակ՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ տրանսպորտային անվտանգության կամ էներգետիկայի ու էներգասպառման բնագավառներում ստուգում անցկացնելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում իրավասու չի լինելու անցկացնել ստուգումներ հրդեհային անվտանգության կամ քաղաքաշինության բնագավառներում):

Առաջարկվել է **«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում** փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը 1-ին հոդվածի 3)-րդ կետից հետո լրացնել 4)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

4) 2-րդ մասի բ) կետի երկրորդ պարբերությունը «նպատակային օգտագործումը,» բառերից հետո լրացնել «առանց շահագործման թույլտվության կառուցապատողի կողմից գույքի շահագործումը» բառերով:

Առաջարկվել է **«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում** փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5–րդ հոդվածը 1)-ին կետից հետո լրացնել նոր 2)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

2) 2-րդ մասում «գործի վերաբերյալ եզրահանգումը» բառերից հետո լրացնել հետևյալ բառերը

«- խախտման վերացման համար տրված ժամկետը
- տուգանքի փոխանցման համար հաշվեհամարը»:

Առաջարկը պայմանավորված է Տեսչական մարմնի կողմից կայացվող որոշումների ձևի հստակեցմամբ:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կազմվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել առաջակություններ մի շարք իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» և «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման մեջ:

Առաջարկվել է **«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածը «վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին)» բառերից հետ լրացնել «, տարածքային կառավարման» բառերով (հիմք ընդունելով այն փաստը, որ «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընթացիկ ստուգումներն իրականացնում են մարզպետները): Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուժը կորցրած ճանաչել 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:» (քանի որ նշված գործառույթն իրականացնում է Տեսչական մարմինը):

««Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագծի) վերաբերյալ առաջարկվել է այնուամենայնիվ ընթացիկ ստուգումներ իրականացնելու իրավասությունը թողնել մարզպետներին, քանի որ, նախ, տեսչական մարմինը ապահովված չէ համապատասխան ռեսուրսներով՝ տեսչական և ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ նաև ընթացիկ ստուգումներ իրականացնելու համար, բացի այդ, մարզպետներին զրկելով նման իրավասությունից, համայնքներում թողտվության հավանականությունը կմեծանա:

Առաջարկվել է **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի** նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «Նույն մարզպետարանում կամ տեղական ինքնակառավարման մարմնում տարվա ընթացքում մեկից ավելի ստուգում կարող է իրականացվել տեսչական մարմնի կառավարման խորհրդի

համաձայնությամբ՝ տեսչական մարմնի ղեկավարի միջնորդագրի հիման վրա:» բառերը: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «՝ տեսչական մարմին կառավարման խորհուրդի համաձայնությամբ» բառերը:

- Նախագծի 6-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «՝ *համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում» և «՝ համայնքի վարչական սահմաններում*,» բառերը:
- Օրենքում «օր» բառը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «*աշխատանքային օր*» բառերով:

Նախագով նախատեսվել էր, որ նույն մարզպետարանում կամ տեղական ինքնակառավարման մարմնում տարվա ընթացքում մեկից ավելի ստուգում կարող է իրականացվել տեսչական մարմնի կառավարման խորհրդի համաձայնությամբ՝ տեսչական մարմնի ղեկավարի միջնորդագրի հիման վրա, սակայն, օպերատիվության տեսանկյունից, ինչպես նաև նմանատիպ դեպքերի քնակից ելնոլով առաւարկվել է նշված հատվածը նախագծից հանել: Պայմանավորված նաև ստուգումների թվով և ծավալով՝ առաջարկվել է օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետները փոխել աշխատանքային օրերով՝ վարչարարությունը սահմանված ժամկետներում պատշաճ իրականացնելու համար:

Ուսումնասիրելով **«Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը** (այսուհետ՝ Նախագիծ)՝ առաջարկվել է Նախագծի հավելվածի 31-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «31. Հողագրունտի հանույթի ընթացքում աշխատանքների անվտանգության պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:»: Առաջարկը բխում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ Տեսչական մարմնին գեոդեզիայի, հողօգտագործման և քարտեզագրության բնագավառներում վերապահված վերահսկողական գործառույթներից:

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տրանսպորտի բնագավառում բերվել է 9 վերադաս բողոք, որից 4-ի դեպքում բողոքը մերժվել է, 3-ի դեպքում վարչական գործի վարույթը կարճվել է, 1-ով կնքվել է հաշտության համաձայնություն, մեկով վարչական գործի վարույթը կասեցվել է: Բողոքները վերաբերվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին, Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ հաշվետու ժամանակահատվածում բողոք չի ներկայացվել:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեխնիկական անվտանգության բնագավառում ներկայացվել է 8 վերադաս բողոք, որոնցից 7-ը մերժվել է և կայացված վարչական ակտերը թողնվել են ուժի մեջ, 1-ի հետ կնքվել է հաշտության համաձայնություն, մյուս գործով վարչական ակտը հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ չի կայացվել: Բողոքները վերաբերվել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է մեկ դիմում: Դիմումը վերաբերվել է Տեսչական մարմնի ղեկավարի և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից անգործության դրսևորմանը: Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել է դիմում բողոքը և պարզվել է, որ դիմումատուի կողմից ներկայացված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը: Դիմումի ուսումնասիրությամբ պատասխան նամակ է ուղարկվել դիմումատուին: Հարցի հետ կապված զանգվածային լրատվամիջոցով տրվել է հարցազրույց:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում բողոքներ չեն ներկայացվել:

Քաղաքաշինության բնագավառում

Քաղաքաշինության բնագավառում բողոքներ չեն ներկայացվել:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում բողոքներ չեն ներկայացվել:

8.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ-ի 730-Լ որոշման լուծարված տեսչություններից Տեսչական մարմնին փոխանցվել է 352 դատական գործ, որից 247-ով կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իսկ 105-ը դեռևս ընթացիկ փուլում է: Տնտեսվարող սուբյեկտների օգտին կայացվել է թվով 168 վճիռ, իսկ 79-ը բավարարվել է հօգուտ պետության (Տեսչական մարմին):

Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 19 հայցադիմում, որից 18-ը Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 1-ը՝ վնաս պատճառող գործունեությունն արգելելու մասին (Տեսչական մարմինը նշված գործով երրորդ անձ է).

1) տրանսպորտի ոլորտում՝ 9 հայցադիմում, որից 8-ն ընդունվել է վարույթ, գտնվում է դատաքննության փուլում, 1-ը վերադարձվել է.

2) գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտում՝ 1 հայցադիմում, ընդունվել է վարույթ, գտնվում է դատաքննության փուլում.

3) տեխնիկական անվտանգության ոլորտում՝ 8 հայցադիմում, որից 4-ն ընդունվել է վարույթ, մեկի վարույթ ընդունելը մերժվել է, 1-ը վերադարձվել, 2-ի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել.

4) քաղաքաշինության ոլորտում՝ 1 հայցադիմում, որի վերաբերյալ դեռևս որոշում չի ընդունվել.

Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 1 հայցադիմում՝ քաղաքաշինության ոլորտում՝ Աբովյանի քաղաքապետին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2019 թվականի ընթացքում կատարված հսկողական և վերահսկողական միջոցառումների շնորհիվ բացահայտված ռիսկերը կապված են հետևյալ ուղղությունների հետ.

1. ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը, ինչը բխում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներից, որոնց համաձայն անհրաժեշտ է հնարավորինս կանխարգելել միջպետական ուղևորափոխադրումների ոլորտում առկա ռիսկերը՝ ապահովելով բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների և ուղևորների սպասարկման անվտանգությունը.

2. տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից տաքսամոտորային ուղևորափոխադրումները, որտեղ ռիսկերը պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ.

3. ՀՀ տարածքում «Հայավտոկայան» ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպումը, այն է՝ չվացուցակներով սահմանված սպասարկման ռեժիմի համաձայն փոխադրումների կազմակերպման ապահովումը, ծառայությունների մատուցումը, ուղեբեռի ժամանակավոր պահպանման իրականացումը, ուղևորների նստեցման և անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացները.

4. ներքաղաքային կանոնավոր երթուղիների սպասարկման իրականացումը Երևան քաղաքում և հանրապետության խոշոր բնակավայրերում: Քաղաքացիներից և տնտեսվարող սուբյեկտներից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են կանոնավոր երթուղիների չվացուցակների անհստակությանը, չվացուցակների կրկնություններին, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, ինչպես նաև կանոնավոր երթուղու ուղեգծով երթևեկող բազմաթիվ ոչ կանոնավոր և տաքսամոտորային փոխադրողների առկայությանը:

5. ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների կազմակերպումը, որի ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ.

6. ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեությանը ներկայացվող օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ

վերահսկողության իրականացումը, որի ռիսկայնությունը կապված է տրանսպորտի շահագործման և անվտանգության կանոնների խախտումների հետ.

7. տրանսպորտային անվտանգության ապահովմանը խոչընդոտող հիմնական պատճառներն են գործող օրենսդրության մեջ առկա բացթողումները և Տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակի որոշակի սահմանափակումները, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների (տրանսպորտային և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն, ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ համապատասխան կշեռքների ապահովում, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման անցկացման և վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

1. ՀՀ էներգետիկական համակարգում 2019թ. ընթացքում տեղի ունեցած մահացու ելքով 19 պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված 24 դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց մի մասը (մոտավորապես՝ 20 %) տեղի են ունեցել էներգատեղակայանքներում, որոնք փաստացի տիրազուրկ են, չեն գտնվում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ԳազպրոմԱրմենիա» ՓԲ ընկերությունների հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, փոխարինման աշխատանքներ, ընկերությունները պատասխանատվութուն չեն կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերությունների կողմից սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա և բնական գազ մատակարարելու համար:

2. Էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած պատահարների արագ վերականգնմանը երբեմն խոչընդոտում է էներգահամակարգում ռեակտիվ էներգիայի պակասորդի առկայությունը, որի համար պատճառ են հանդիսանում ՀԷԿ-երում հիդրոգեներատորների սինխրոն կոմպենսատորի ռեժիմում աշխատելու և հզորության գործակցի սահմանված չափի ապահովման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում դրանց ապահովման պահանջների բացակայությունը:

3. Էլեկտրատեղակայանքների հետ առնչվող վարչատեխնիկական, շահագործող, նորոգող, կարգաբերող, փորձարկող, շինմոնտաժային, օպերատիվ և այլ անձնակազմերի համար տեխնիկական կանոնակարգերում սահմանված են պահանջներ՝ կապված էլեկտրատեղակայանքներում աշխատանքի պայմանների ռիսկերի գնահատման, առողջության, էլեկտրաանվտանգության ապահովման համար անհրաժեշտ և համապատասխան որակավորման խումբ ունենալու հետ, սակայն տվյալ կանոնակարգերում ամբողջովին արտացոլված չեն անձնակազմերի ուսուցման ծրագրերին, էլեկտրաանվտանգության

որակավորման խմբերի շնորհման անհրաժեշտ ծավալին և բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները, դրանց շնորհման պայմաններն ու կարգը:

Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, անձնակազմերի ուսուցման և վերապատրաստման ուսումնական կենտրոնների, ինչպես նաև սահմանված կարգով և ժամկետներում գիտելիքների ստուգման և որակավորման խմբերի շնորհման համար իրավասու մշտական գործող հանձնաժողովների բացակայությունը խնդիրներ են առաջացնում տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որոնք չեն կարողանում կազմակերպել համապատասխան մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացները: Որակավորում ունեցող մասնագետների բացակայությունը հանգեցնում է էլեկտրատեղակայանքների անվտանգ շահագործման ռիսկերի աճին՝ պատճառ հանդիսանալով մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ պատահարների առաջացմանը:

4. Կատարված մասնագիտական քննությունները ցույց են տվել, որ գազամատակարարման բնագավառում մահացու ելքով պատահարների զգալի մասը տեղի է ունենում գազի ներտնային գազասպառման համակարգերի ոչ պատշաճ, առանձին դեպքերում նաև ոչ բարեխիղճ սպասարկման արդյունքում, որի իրականացման մենաշնորհը պատկանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ընտրված «Էյ-Ի-Ջի» ՍՊ ընկերությանը:

5. «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ 5.8 ՄՎտ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման համակարգում ստուգումներ չեն իրականացվում համապատասխան ստուգաթերթերի բացակայության պատճառով:

6. Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է ելնելով տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների ռիսկայնության գնահատումից, ինչը առաջին հերթին ենթադրում է Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում գործունեություն իրականացնող շուրջ 10 000 տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների տեղեկատվական բազայի ձևավորման աշխատանքների կատարում՝ ըստ համապատասխան չափորոշիչների:

7. ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչության և տարածքային բաժինների համապատասխան մասնագետների թվաքանակի ոչ բավարար լինելը անհնար է դարձնում ստուգման ենթակա շուրջ 10 000 տնտեսվարող սուբյեկտներում և դրանց օբյեկտներում հնարավոր ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ քանակությամբ ստուգումների, տարեկան շուրջ 1200 էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով տեխնիկական ստուգումների, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների և օրենքով վերապահված այլ գործառույթների և համակարգման այլ գործընթացների պատշաճ իրականացումը, ինչը թույլ չի տալիս լիարժեք վերահսկողություն իրականացնել, ամբողջությամբ գնահատել և նվազեցնել հնարավոր ռիսկերը:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

1. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1697-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներով և հաշվի առնելով 2019 թվականի ընթացքում

արձանագրված հրդեհների վիճակագրությունը՝ Տեսչական մարմինը 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով թիրախավորել է հրդեհային անվտանգության տեսակետից հետևյալ առավել ռիսկային ոլորտները՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստներ:

2019 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ վարչապետի հանձնարարությամբ իրականացված ստուգումները բացահայտեցին որոշ ստուգաթերթերում լրամշակումներ կատարելու անհրաժեշտությունը:

2. Պետական եկամուտների շտեմարանում գրանցված գործող տնտեսավարող սուբյեկտների քանակը գերազանցում է 150.000-ը: Յուրաքանյուր սուբյեկտի համար, ելնելով դրա ոլորտային պատկանելիությունից, անհրաժեշտ է իրականացնել ռիսկայնության հաշվարկներ, ինչը հնարավորություն կտա բացահայտելու առավել ռիսկային սուբյեկտները: Տեսչական մարմնի կողմից արդեն իսկ իրականացվում են բազավորման աշխատանքներ՝ Exell և Acsess ֆորմատներով: Սակայն soft ծրագիր ունենալու պարագայում կբացառվեն կրկնությունները, հաշվարկների անճշտությունները, կապահովվի ըստ ռիսկայնության ստուգման համար նախատեսվող օբյեկտների ընտրության անաչառությունը:

3. 2019 թվականի ընթացքում հանրակրթական դպրոցներում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքներով պարզվել է, որ ոլորտը պետք է մշտապես պահվի ուշադրության կենտրոնում:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

1. Համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման պահանջների՝ պետական վերահսկողության ենթակա են քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերը՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջների իրականացում, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկում, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և նախագծման տեխնիկական պայմանների տրամադրում կառուցապատողներին, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցում, փորձաքննություն ու հաստատում, շինարարության (քանդման) թույլտվություն, շինարարության իրականացում, հեղինակային ու որակի տեխնիկական հսկողություն, շինարարության ավարտական ակտի ձևակերպում, շենքերի ու շինությունների շահագործում:

Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության խնդիրներն են՝

ա) քաղաքաշինական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից,

բ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը,

գ) աշխատանքներ իրականացնող սուբյեկտների կողմից քաղաքաշինական նորմատիվ՝ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը,

դ) բնակավայրերի և այլ գործառական տարածքների հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինության նպատակով օգտագործումը,

ե) շենքերի և շինությունների շինարարության (քանդման) և շահագործման ընթացքում բնակչության ու շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը,

զ) ինքնակամ շինարարության (քանդման) կանխարգելումանը և կասեցմանը ուղղված միջոցառումների իրականացումը:

Նշված աշխատանքների լիարժեք իրականացումը կախված է մասնագետների թե՛ քանակից, թե՛ արհեստավարժությունից:

2. Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Տեսչական մարմինը ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս պետք է առաջնորդվի ռիսկայնության հաշվարկով՝ իր սահմանափակ ռեսուրսներն ուղղելով դեպի առավել ռիսկային ոլորտներ: Այդ նպատակով 2019 թվականի ընթացքում լրամշակվեց և ՀՀ կառավարության կողմից հաստատվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշումը, որով սահմանվեցին քաղաքաշինության բնագավառում իրականացնելու համար օբյեկտների ընտրության չափորոշիչները: Այս ձևաչափով հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ է համայնքների ղեկավարների կողմից ամբողջական լրացված Ձև 2-5 տեղեկանքների և շինարարության թույլտվությունների ժամանակին ներկայացնելը:

3. Մինչ օրս «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում չեն կատարվել Տեսչական մարմնի կողմից 2019 թվականին առաջարկված փոփոխությունները, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել ստուգումներն ամբողջ ծավալով:

4. Անհրաժեշտություն կա բնագավառին առնչվող տեղեկատվական շտեմարանների (Ձև 2-5 տեղեկանքների, շինարարության թույլտվությունների, տրամադրված ավարտական ակտերի) ձևավորման:

5. 2019 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև կատարված մշտադիտարկումների շնորհիվ բացահայտված խնդիրները հիմնականում վերաբերում են համայնքների ղեկավարների կողմից կարգերի շեղումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը, համայնքների

ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը և ինքնակամ կառույցների նկատմամբ ոչ պատշաճ հսկողության իրականացմանը, կառուցապատողի կողմից՝ նախագծային շեղումներին, աշխատանքների որակի տեխնիկական և նախագծային հսկողության ոչ պատշաճ իրականացմանը:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

1. 2019 թվականին դիմումների, գրությունների և ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված 41 ստուգումների վիճակագրությունը ցույց տվեց, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները հանդիսանում են հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական մարմինների անգործության դրսևորումը:

2. 2019 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքներից շատերը վերաբերում են հերթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումներին: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշման՝ քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ Տեսչական մարմնի կողմից առաջարկվել է կատարել փոփոխություններ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, համաձայն որի գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական վերահսկողությունը կիրականացնի ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը: Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական խնդիրներն են՝

ա) գեոդեզիական և քարտեզագրական գործունեության բոլոր սուբյեկտների կողմից գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանման վերահսկողությունը.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքի գեոդեզիական կետերի և վարչատարածքային միավորների սահմանանիշերի հաշվառման, պարբերաբար հետազոտման և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների վերահսկողությունը.

գ) գեոդեզիական աշխատանքների չափաբանական ապահովման, սերտիֆիկացման և ստանդարտների պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

դ) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի և վարչատարածքային միավորների սահմանագծման և սահմանազատման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը.

ե) քարտեզների և հատակագծերի վրա աշխարհագրական անվանումների ճիշտ արտահայտման նկատմամբ վերահսկողությունը.

զ) պետական և տեղական նշանակության (գերատեսչական) քարտեզագրագեոդեզիական ֆոնդերի պահպանման, նյութերի և տվյալների բազմացման ու օգտագործման, տեղեկատվության տրամադրման նկատմամբ վերահսկողությունը:

Վերը նշված փոփոխությունների հաստատումից հետո կներկայացվեն առաջարկներ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կանոնադրության մեջ համապատասխան շտկումներ կատարելու վերաբերյալ:

3. Համապատասխան մեթոդաբանության և ստուգաթերթերի բացակայության պատճառով Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել ստուգումներ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում:

4. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխատավության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող զանցանքների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր զանցանքները կանխելու համար:

5. Վերահսկողական գործառույթների իրականցումը ամբողջ ծավալով հնարավոր է ապահովել անձնակազմի թվաքանակի ավելացման և անհրաժեշտ տեխնիկական հագեցվածքության դեպքում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության կատարողականի գնահատման հիմքում ընկած են Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների գործընթացին առնչվող առանձին ցուցանիշները և դրանց վերլուծությունները:

Համաձայն տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի Հավելված 1-ի (2019 թվականի տարեկան գործունեության միջոցառումների ժամանակացույց)՝ Տեսչական մարմինը նախատեսել էր ստուգումների տարեկան ծրագրի կազմում, ստուգումների գործընթացի ապահովում առաջին կիսամյակում:

2019 թվականի համար Տեսչական մարմինը ստուգումների հաստատված տարեկան ծրագիր չի ունեցել:

Տեսչական մարմնի ստուգաթերթերը հաստատվել են համաձայն՝ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ, իսկ Տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները հաստատվել են համաձայն՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1697-Ն որոշմամբ:

Հետևաբար՝ 2019 թվականին Տեսչական մարմնի գործունեության կատարողականը, ստուգումների գործընթացի բացակայությամբ պայմանավորված, չի գնահատվել:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2019 թվականի տարեկան ծրագրի՝ որակի ապահովման վարչությունը Տեսչական մարմնում իրականացրել է ներքին հսկողական աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

1. **<u>կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն,</u>**
2. **<u>բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն,</u>**
3. **<u>Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն</u>**:

1. <u>Կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն</u> գործառույթի շրջանակներում իրականացվել է Տեսչական մարմնում կարգապահական կանոնների ապահովման ուսումնասիրություն և վերլուծություն, արդյունքում արձանագրվել է հետևյալը.

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնում ծառայողական քննություն է նշանակվել մեկ ծառայողի նկատմամբ, ծառայողական քննությունը նշանակվել է ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու արդյունքում: Տեսչական մարմնի ղեկավարը ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի <բ> ենթակետով և 10-րդ մասով՝ ծառայողի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ <<նկատողություն>>:

2019 թվականի ընթացքում ներքին կարգապահական կանոնների խախտման այլ դեպքեր չեն արձանագրվել:

Ուսումնասիրվել է տեսչական մարմնի աշխատակիցների ներքին կարգապահական և էթիկայի կանոնների պահպանման վիճակը՝ մասնավորապես յուրաքանչյուր մասնագետի պաշտոնի անձնագրով նախատեսված պարտականությունների կատարման ընթացքը:

2. Բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն գործառույթի_շրջանակներում իրականացվել են Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրում, թերությունների վերհանում և դրանց հիման վրա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ են մշակվել և ներկայացնել Տեսչական մարմնի կառավարման խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

2019 թ-ի ընթացքում Տեսչական մարմին է մուտքագրվել թվով 886 դիմում-բողոքներ: Տեսչական մարմնի դեմ բերված բողոքներից հատկապես մեծ թիվ են կազմել Ռաֆիկ Վիրաբյանի դիմում-բողոքները՝ <<Արմօյլ>> ՓԲԸ կողմից կառուցված Նավթավերամշակման գործարանի վերաբերյալ: Ռաֆիկ Վիրաբյանը ՀՀ վարչապետին, բոլոր նախարարներին, ազգային ժողովի պատգամավորներին, գերատեսչություններին անընդմեջ, թիվը վերջինիս պնդմամբ գերազանցում է 3600-ը, ներկայացրել է դիմում-բողոքներ, սակայն պատասխան գրությունները Ռ. Վիրաբյանին չեն բավարարել և շարունակել է բողոքել, այդ թվում նաև հայցադիմում է ներկայացրել դատարան (գործ թիվ՝ ԵԴ/24323/02/19):

Տեսչական մարմնի դեմ դատական կարգով բողոքարկվել է 19 գործ, որից 18-ը Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումներ են, 1-ը՝ վնաս պատճառող գործունեությունն արգելելու մասին (Տեսչական մարմինը նշված գործով երրորդ անձ է):
Տեսչական մարմնի ծառայողների գործողությունների դեմ բերված դիմում-բողոքների թիվ կազմել է 3-ը, բացառությամբ Ռաֆիկ Վիրաբյանի դիմումների:

3.Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն գործառույթի շրջանակներում ուսումնասիրվել են Տեսչական մարմնի ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և արդյունքը, բացահայտվել են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:

Տեսչական մարմնում 2019 թվականի ընթացքում նախատեսված կադրային համալրումն ամբողջովին չի ավարտվել:

Կառուցվածքային ստորաբաժանումներում, այդ թվում՝ մարզային բաժիններում առկա է հաստիքների քանակի վերանայման անհրաժեշտություն՝ աշխատանքային գործունեության

ընթացքում օպերատիվության ապահովման, կադրերի ողջամիտ համալրման և ֆինանսական ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով:

Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր եռամսյակ որակի ապահովման վարչություն ուղարկված հաշվետվություններն ուսումնասիրվել են, կատարվել են վերլուծություններ, որի հիման վրա կազմվել են որակի ապահովման վարչության եռամսյակային հաշվետվությունները և ներկայացվել են ՀՀ ՔՏՀԱՏՄ-ի կառավարման Խորհուրդ:

Որակի ապահովման վարչության կողմից պարբերաբար ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ կազմված գործերը, դրանցում առկա բոլոր փաստաթղթերը, վերջիններիս համապատասխանությունը օրենսդրությանը:

Ներքին հսկողական գործառույթի շրջանակներում պարբերաբար ուսումնասիրվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը, կայքէջի թարմացման հաճախականությունը, տեղադրված տեղեկատվության արդիականությունը, Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման մակարդակը, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով պահանջվող տեղեկատվության հրապարակումը:

ՀՀ Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանում գործուղվել են տարածքային ստորաբաժանումներ: Գործուղման ընթացքում իրականացրել են ուսումնասիրություններ տարածքային ստորաբաժանումներում ներքին կարգապահական, ինչպես նաև կատարված աշխատանքների գործընթացների վերաբերյալ:

Գործուղումների ընթացքում պարզվել են, որ ՀՀ ՔՏՀԱՏՄ մարզերի ստորաբաժանման ոլորտները վերահսկող մասնագետների մոտ ամբողջական չեն և դեռևս հավաքագրման փուլում են վերահսկողություն իրականացնելու նպատակով պահանջվող տնտեսվարող սուբյեկտների ցանկերը, որոնք պետք է բազա հանդիսանան իրենց գործունեությունը կազմակերպելու համար: Տարածքային ստորաբաժանումներում աշխատակիցների մոտ առկա է <Mullbery 2.0> համակարգից օգտվելու հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն:

Տարածքային ստորաբաժանումներում մասամբ են տիրապետում նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին, արդյունքում առկա են թերություններով իրականացված վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունները:

Որակի ապահովման վարչության ուսումնասիրությունների ընթացքում պարզվել են նաև, որ Տեսչական մարմնում չեն հաստատվել վարչական իրավախախտումների և վարչական վարույթների վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը: Վարչարարությունը իրականացվել է համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի:

Դեռևս չի հաստատվել ներքին գործավարության կարգը, որի բացակայությունը կարող առաջացնել ներքին փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգված իրականացնելու խնդիրներ:

Տեսչական մարմնի կողմից կազմվել և 2019թ-ի մայիս ամսին Կառավարման խորհուրդ է ներկայացվել ստուգումներ իրականացնելու վերաբերյալ ուղեցույցը, կառավարման խորհրդի անդամների դիտարկումների և առաջարկությունների հիման վրա այն վերադարձվել է, ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:

Չորրորդ եռամսյակի ընթացքում իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչութան կողմից կազմվել և տարածքային ստորաբաժանումներ է առաքվել ստուգումների պլանավորման, կազմակերպման, ամփոփման համար նախատեսված ուղղորդող փաստաթուղթ, մշակվել են միատեսակ արձանագրություններ, կարգադրագրեր՝ ըստ ոլորտների:

Լուծարված տեսչություններից Տեսչական մարմնին փոխանցվել է 352 դատական գործ, որից 247-ով կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իսկ 105-ը դեռևս ընթացիկ փուլում է: Տնտեսվարող սուբյեկտների օգտին կայացվել է թվով 168 վճիռ, իսկ 79-ը բավարարվել է հօգուտ պետության (Տեսչական մարմին): Դատարանների վճիռները 2019թ.-ի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ դատարաններ չեն բողոքարկվել: Վերադասության կարգով չեն բողոքարկվել, քանի որ գործերի ուսումնասիրությամբ Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությունը արձանագրել է, որ պարտության պատճառները հիմնականում նախկին լուծարված տեսչությունների վարչարարությունը ոչ պատշաճ իրականցումնելու արդյունք է, այն պետական միջոցների և ժամանակի անիմաստ վատնում է, դատական ակտերը հիմնավոր են, բողոքարկման հիմքերը բացակայում են:

2019թ.-ի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 13 հաղորդում ՀՀ իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն, հարուցվել են քրեական գործեր չարաշահումների վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ Տեսչական մարմնին առաջարկվել է՝

- Իրականացնել Տեսչական մարմնի տարածքային բաժիններում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների և վարչական ակտերի հաշվառում:
- Ոլորտային վարչությունների կողմից որոշակի պարբերականությամբ (օրինակ՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության) իրականացնել խորհրդակցություններ տարածքային ստորաբաժինների մասնագետների հետ, քննարկել առկա խնդիրները, ձևավորել միատեսակ աշխատաոճ և մոտեցում:
- Առաջարկվել է մշակել Տեսչական մարմնի ներքին գործավարության կարգը:
- Առաջարկվել է ամբողջությամբ ապահովել Տեսչական մարմնի մարզերի տարածքային ստորաբաժիններին համացանցով, համակարգչային ներքին ցանցով, հեռախոսակապի հասանելիությամբ, գրասենյակային գույքով, համակարգիչներով, տպիչների (printer) պարագաներով:

- Առաջարկվել է բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին ապահովվել ավտոտրանսպորտային միջոցներով:
- Առաջարկվել է տնտեսվարող սուբյեկտներին բացատրական աշխատանքներ իրականացնել օրենսդրության պահանջների և դրանց պահպանման, ինչպես նաև՝ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:
- Առաջարկվել է իրազեկման միջոցառումներ իրականացնելիս վերահսկողության բոլոր ոլորտներում տեղեկատվական նյութի հրապարակումների հետ միաժամանակ կազմակերպել և իրականացնել խորհրդատվական բնույթի հանդիպումներ տնտեսվարող սուբյեկտների համար:
- Առաջարկվել է ստորաբաժանման աշխատակիցների շրջանում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ինչպես աշխատանքային հմտությունների («Mulberry 2.0» ծրագրից օգտվելու հմտություններ) կատարելագործման, այնպես էլ պատշաճ մակարդակով վարչական վարույթ իրականացնելու կապակցությամբ:
- Առաջարկվել է ՀՀ ՔՏՀԱՏՄ վերահսկողության տիրույթում գտնվող և ՀՀ տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտների ցանկը հստակեցնելու նպատակով դիմել ՀՀ ԱՆ իրավաբանական ածանց պետական ռեգիստրի գործակալություն, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:
- Առաջարկվել է Տնտեսվարող սուբյեկտների օգտին կայացրած Դատարանների վճիռները, Տեսչական մարմնի համապատասխան մասնագետների կողմից բազմակողմանի ուսումնասիրել, անհրաժեշտության դեպքում վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ կամ ՀՀ վճռաբեկ դատարաններ բողոքներ ներկայացնել: